

ՀՆՁԱԿ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ



ՀՆՁԱԿԵԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ՊԱՅՏՈՆԱԿԱՆ ՅԵՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՀՆՁԱԿԵԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Անհուն ուրախութեամբ կը հաղորդենք հայ հասարակութեան, թէ Հին և Վերակազմեալ Հնչակեան երկու հասուածներուն մէջ միութեան բոլոր պայմաններուն վրայ վերջնական համաձայնութիւն գոյացած ըլլալով՝ միութիւնը կատարուած է.

Միացեալ ու միակ Հնչակեան կուսակցութեան նոր կեդրոնական վարչութիւնը սխալ կազմութիւն անյապաղ, ամբողջ կուսակցութեան բուհով:

ՄԻՈՒԹԵԱՆ ՉԱՅՆԸ

Ձեռք բերուեցաւ այն ինչ սպասուած էր անձկութեամբ և անհամբեր:

Ինչ էր սպասուած:

Սպասուած էր որ Միութեան աւետաւոր ձայնը, կայծակի արագութեամբ, ձեղքելով անցնելով անհուն տարածութիւններ, ցամաքներ ու օվկիանոսներ, հասնելով ու թափանցելով ամեն երկիր, ամեն քաղաք, ամեն գիւղ, ամեն անկիւն, ամեն տեղ, ուր հայութիւն կայ, ուր հայ սիրտ է բաբախում, ուժգնապէս ցնցէր ու սթափեցնէր նրան այն թմրութիւնից, որին ենթարկուել էր նա տարիներից ի վեր, արթնացնէր նրան այն խոր, լեռնադաշտի քնից, որի մէջ ընկղմուել էր նա սոսկալի, եղեռնական թուականներից յետոյ, քաշէր դուրս բերէր նրան այն ասլութիւնից, այն շուարումից, այն վարանոտ, տատաւըստ, երկմիտ ու սկեպտիկ դրութիւնից, որի մէջ ընկած՝ կորցրնէր էր նա իրերի կացութեան յստակ ու պայծառ ընթանումն ու հասկացողութիւնը, կորցրնէր էր յոյսն ու հաւատըրդ զէպի գործը, կորցրնէր

և վստահութիւնը՝ զէպի անձինքը, զէպի մարդիկը զէպի այն մարմինները, որոնք կոչուած ունէին իրականացնելու նրա սրտի ամենաջերմ, ամենատուրբ բաղձանքները...

Մեր այդ անկալութիւնը, մեր այդ սղասածը, մեր այդ յոյսը իրադարձուած է: Այդ գեղեցիկ, փառաւոր, կենսատու և փրկարար արդիւնքը, որին բոլոր ուժով, բոլոր հոգով ձգտուած էին բոլոր նրանք՝ որոնք զործիքները եղան կայացած Հնչակեան Միութեան — այդ առաջնակարգ և այլ ևս անյետաձգելի անհրաժեշտութեան ազդային յեղափոխական կեանքի մէջ — ձեռք է բերուած: Այս կատարեալ իրողութիւն է: Ամեն տեղից, Ամերիկայից, Բուլղարիայից, Ռուսաստանից, Ռումանիայից, Պարսկաստանից, հետզհետէ հասնում են նամակներ, որոնք արտայայտում են միևնոյն ուրախութիւնը, միևնոյն յափշտակութիւնը, միևնոյն հիացումը Հնչակեան փառաւոր Միութեան համար, որի ձայնը տարածուելով այդ բոլոր երկիրներում, ցնցել, շարժել է հայ ժողովրդին ուժգնապէս, որպէս երբեք արեւմտեան ուժեղ հոսանքի տակ: Ամեն տեղ, առանց բացառութեան, առանց խտրութեան, բոլոր Հնչակեանները, բոլոր անկեղծ յեղափոխականները, բոլոր համակիրները, բոլոր հայ ժողովուրդը, խնդրութեան ու խանդավառութեան մէջ, որոտազին ծափահարում են Հնչակեան Միութիւնը: Ամեն տեղ կայացած Միութիւնը նկատուում է որպէս կատարեալ, որպէս փառաւոր յաղթութիւն, ձեռք բերուած թշնամու վերայ, կուսակցական նախանձոտ, չար և ազդադաւ ոգու վերայ, ամեն կարգի ներքին և աղետալի երկաւառակութիւնների վերայ: Այս նկատումէ այլ և, որպէս խոհրդանշան, ամբլէմ, հայկական ցանկալի Ազատութեան ըստըրկական անարգ լուծից: Հայ պանդուխտը, հեռու հայրենիքից, հեռու սիրական յարկից, կեղեքիչ հարկերի ու հարստահարութիւնների երեսից

ընկած այնտեղ, աշխարհի կորած մի անկիւնում, լսում է Միութեան ձայնը և թւում է իրեն, զբաղյոր պատրանք, թէ արդէն Հայաստանը ազատւած է: Այն խոր, ներքին զգացումը, որի համեմատ յեղափոխական ոյժերի միացումը համապատասխան է Հայրենիքի ազատութեան, դարմանալի զուգադիպութեամբ երևան է դալիս և՛ անգրագէտ, մտաւորապէս անմշակ դաւառացի հայ պանդուխտի մօտ և՛ զրբերի երես տեսած, բարձր դրօշմաների շէնքը կոխած հայ ինտելիգէնտի մօտ, որոնցից մին բնաղբորէն, մի անդամից, հասարակ խելքով, առանց երկար ուսումնասիրութեան, միւսը՝ դիտակցական քննութեան ծանապարհով, դալիս յանգում են միեւնոյն այդ ճշմարտութեան, թէ Հայրենիքի Ազատութիւնը ուրիշ ոչ մի ոյժից կախուած չէ այլ ևս, բայց եթէ յեղափոխական բոլոր ուժերի միացումից, նրանց բոլորի ներգաշնակ, համերաշխ համագործակցութիւնից: Եւ հէնց այս անհրաժեշտ և ճշմարտութեան զգացման է որ եկաւ զօհացում տալու Հնչակեան Միութիւնը: Եւ հէնց այդ է պատճառը որ այդ Միութիւնը ընդունուեցաւ ամեն դասակարգերի կողմից միեւնոյն համակրութեամբ, միեւնոյն յափշտակութեամբ և միեւնոյն ոգևորութեամբ:

Միութեան ձայնին արագ արագ դալիս են այն բոլոր ազնիւ, մաքուր Հնչակեանները, որոնք հիասթափուած ժամանակաւոր անյաջողութիւնից, ընդարմացած մի բողբ այն ծանր ու սոսկալի հարւածներէից, որոնք միմեանց ետեւից հասցրեց մեզ մեր թշնամին անխղճաբար, անողորմաբար, բայց աւելի, խախտուած իրենց ներքին համոզման ու հաւատքի մէջ դէպի գործը, հանդէպ այն աղետալի ներքին կռիւների ու երկպառակութիւնների, որոնք չուշացան պայթիլ մեր սեփական շարքերի մէջ ազգային զբաղղութիւններից անմիջապէս յետոյ, հեռացած էին յեղափոխական ասպարէզից, դալիս են և խոմբերով մտնում, համախմբուած այն դրօշի տակ, որ՝ առաջնորդել էր նրանց մի ժամանակ դէպի Ազատութեան սուրբ կռիւը:

Միութեան ձայնին դալիս են Արմենական եղբայրները, որոնք այլ ևս անպէտք և փնտաւար գտնելով ուրոյն մարմին կազմել և ուրոյն, անօգուտ գործունէութիւն ունենալ, քանի որ նպատակը, որի համար կռուելու ելած էին՝ մի և նոյն էր երկու տարբեր անունների համար էլ, քանի որ մի և նոյն Հայրենիքն էր որ կոչուած էին ազատել մի և նոյն ընդհանուր թշնամու ձեռքից, քանի որ այլ ևս ամեն պատճառ դադարած էր անջատ փախու, դալիս են և միանում Հնչակեան եղբայրներին, միասին տանելու համար ամենի համար մէկ եղող թշնամու դէմ պարզուած կռիւը:

Միութեան ձայնին դալիս են վերջապէս ազատութեան ոգով, հայրենիքի սիրով և արդար

վրէժխնդրութեան զգացումով տողորուած այն բոլոր նոր երիտասարդները, որոնք գունդերով իրաւարգանդից հետզհետէ ծնում է հայ ժողովուրդը, հանելու համար նրանց Հայրենիքի զօհաբերութեան սուրբ սեղանի վերայ:

Ամեն տեղ կեանք. ամեն տեղ շարժում. ամեն տեղ ոգևորութիւն: Ամեն տեղ արթնացել է ժողովուրդը. ամեն տեղ վերականգնած է համոզումը, յոյսը և հաւատքը: Ասկածի և վարանման տեղ չկայ այլ ևս: Բէակցիան, սոսկալի և յամառութեան, ապահովապէս յաղթուած է: Հակայեղափոխական սև բանակը, որ ահռելի ջարդերից անմիջապէս յետոյ համարձակեցաւ նորից իւր զուլը բարձրացնել և իւր կեղծաւոր, շահախնդիր և չարամիտ ակուզալով, անմիտ և փնտաւար բացականչութիւններով լեցնել ազգային քաղաքական հրապարակը, զուլը կորցրած՝ սկսել է արդէն յետ բաշուլ, յետ նահանջել և տեղի աւլ յեղափոխական ոգու բարձրացման, յեղափոխական շարքերի յաղթական քայլերի առաջ: Վէժմօրալիզացիան, այդ բարոյական փտութիւնը, որ հորուածել էր մասնաւորապէս հայ ինտելիգէնտ դասակարգը և քապառնում էր հետզհետէ հասնել ու վարակել նոյն խի առողջ, թարմ և անաղարտ մնացած յեղափոխական օրգանիզմները, ակներևաբար անհետանում է և մենք ուրախութեամբ տեսնում ենք նոր ինտելիգէնցիային մի կողմ թողնելիս իւր անտարբերութիւնը և մօտենալիս այն միակ շարժման, այն միակ դադափարին, որի իրականացումը հանդիսանում է անհրաժեշտ պայման Ազգային զոյութեան պահպանման, ընդհանուր հայ հասարակութեան փրկութեան: Այո, վճռականապէս, բէակցիան պարտուած է: Հակայեղափոխութիւնը հարկադրուած է տեղի տալու: Այդ նշանակումէ որ յեղափոխութիւնը ինքը փրկուած է:

Ասում ենք յեղափոխութիւնը փրկուած է և կարծում ենք որ չենք չափազանցում:

Ահաւոր ջարդերից յետոյ, երբ մէկ կողմից թշնամու անտեսելի հարուածները, միւս կողմից ներքին տխուր կռիւներն ու խռովութիւնները հեռացրին, մի կողմ նետեցին յեղափոխական ասպարէզից մի յեղափոխական ստուար բանակ, բաղկացած հին ու նոր սերունդի տարրերից, շարունակող կռիւը անհամեմատ աւելի անհաւասար դարձաւ երկու թշնամի ցեղերի միջև: Այդ վիճակի մէջ, կարծես, կռիւը ստացել էր մի միայն կռուի բնաւորութիւն, նա դարձել էր կարծես ոչ միջոց հասնելու նպատակի, այլ եղել էր ինքն իրեն նպատակ: Բայց այդ վիճակը չէր կարող երկար տևել առանց փնտալի, առանց նորանոր չարիքների, որոնք իրենց կողմից ուրիշ բան չէին ունենայ որպէս արգասիք, բայց միայն ազգային թռչառութեան աստիճանի մեծանալը և հակայեղափոխութեան յաղթութիւնը: Իսկ այդ կլինէր, սոս-

կայի է մտածելն ու ասելը, յեղափոխութեան վերջնական ու վճռական մահը, որ, ասել է, նոյն խի ազգի գոյութեան ոչնչանալը: Այդ դրութեան հարկաւոր էր վերջ տալ:

Հարկաւոր էր ի մի վայր հաւաքել ցրուած ոյժերը և բարձրացնել յեղափոխական բարոյականը: Ահա այդ է որ եկաւ կատարելու Հնչակեան Միութիւնը: Ահա այդ է որ տալիս է Միութեան իւր մեծ, իւր պատմական նշանակութիւնը: Հնչակեան Միութիւն, այդ նշանակում է, ոչ սոսկ երկու պառակտուած մասերի, երկու զժողոված կրթայրների հաշտութիւն, ոչ, այդ շատ փոքր, շատ թեթեւ կլինէր, այլ մի կատարեալ, մի փրկարար, մի ճակատագրականապէս անհրաժեշտ շարժում հայ յեղափոխական ասպարէզում, ըստ որում այդ երկու համանուն հաւաքները աւելի շատ հեռացած էին իրարից, որքան չեն կարող լինել երկու զժողոված կրթայրներ, ըստ որում նրանք արդէն ուրոյն կուսակցութիւն կազմելու գոյութեան իրաւունքը ձեռք էին բերած առանձին առանձին, և այդ տեսակէտով՝ աւելի էլ մեծանում է կայացած Միութեան կարեւորութիւնը, նրա նշանակութիւնը, որովհետեւ այդ ցոյց է տալիս որ Միութիւնը մղուած է մի անգուստ, անդիմադրելի ոյժից, որ դալիս է ուղղակի ազգային փրկութեան անհրաժեշտ հզօր պահանջից, որի առաջ ծռեցան Միութիւնը կազմող կողմերը: Հնչակեան Միութիւն, այդ նշանակում է, նա մանաւանդ, բուն իսկ յեղափոխութեան փրկութիւնը, բանի որ նա իրեն հետ բերում է որպէս անմիջական հետեանք՝ ընկալիչայի պարտութիւնը, դէմօրայիցացիայի բարձումը, ասպարէզից բաշտուած և գեղեցիկ ու յուսատու օրերին սպասող չին ուժ, որ Հնչակեանների վերադարձը դէպի յեղափոխական բանակը, որ սերունդին պատկանող թարմ, եռանդոտ, առողջ տարրերին հրապարակ նետուելը և վերջապէս այն անհուն ուրախութիւնը, անհուն բերկրութիւնը, այն աննկարագրելի ոգևորութիւնն ու հիացման ու ինքնամոռացման հասած յափշտակութիւնը, որ առաջ է բերած այդ ազգային յեղափոխութեան տարեդրութեան մէջ փառաւոր դործը և որով փառուած է այսօր հայ ժողովուրդը ամեն տեղ, ամեն կէտի վերայ:

Երկու իրականութիւնները, երկու դրութիւնները, Միութեան ձայնը հնչելուց առաջ և նրանից յետոյ, միմեանցից բոլորովին տարբեր են, մէկը միւսին կատարելապէս հակադասակեր են: Առաջ մենք ունէինք ընդհանուր անորոշութիւն, ընդհանուր անըստութիւն, մինչև իսկ յուսահատութիւն, ընթրում, վհատում. այժմ մենք ունինք աշխոյժ, ոգևորութիւն, խանդ, եռանդ, այսինքն ճիշդ բարոյական այն բոլոր անհրաժեշտ պայմանները, առանց որոնց չկայ Ազգային փրկութիւն, չկայ Հայրենիքի ազատութիւն, չկայ հասարակական բարձր

Իդէալի իրականացում: Աչքի առաջ ունենալով ուրեմն այն վերջին ծայր միտքարական դրութիւնը, որ հայկական յեղափոխականներին իրականութիւնն է այսօր, մենք տեսում ենք համարձակ որ Միութիւնը վճռականապէս դրական եղաւ, որ նա ամենակարեւոր դործը եղաւ ինչպէս Հնչակեան կուսակցութեան, նոյնպէս և ամբողջ հայ յեղափոխական շարժման համար: Այս գեղձ վերաբերմամբ նրա անմիջական հետեանքին: Իսկ թէ ինչ կլինին այն օգուտները, որոնք առաջանալու են այդ Միութիւնից սրանից յետոյ, այդ մասին մենք չենք կարող գուշակութիւնների մէջ մտնել, այդ, իհարկէ, ցոյց կտայ ինքը, ապագան: Բայց որ այդ ապագան լինի է գեղեցիկ խոստումներով, փայլուն յոյսերով, այդ մասին ոչ մի կասկած չէ կարող կենալ: Այն յորդառատ զգացումները, որոնք ինքնաբոլոր դուրս են ժայթքում փխրած հոգիներից, չեն կարող ամուլ և անպտուղ մնալ: Ստացուած է ներգրիան չէ կարող կորչիլ: Հարկաւոր է միայն գործածել նրան օգտակար կերպով:

Հնչակեան Միութիւնը բաց է անում Հայ ժողովուրդի և Հայ յեղափոխութեան առաջ մի նոր շրջան: Այդ շրջանը կլինի անսովոր, նմանը չտեսնուած դուրծունէութեան շրջան: Այդ շրջանում ձեռք կբերուի մենք տարակոյս չունինք, բոլոր յեղափոխական ոյժերի, բոլոր յեղափոխական բանակների անհրաժեշտ, անյետաձգելի և անխուսափելի ամբողջական Միացումը: Տանջուած, չարչարուած մի և նոյն այրերինիքի զաւակները, որպէս մի մարմին, որպէս մի ձոյլ գունտ, մի դրօշակ պարզած — Հայրենիքի դրօշակը — կգնան իրենց մի և նոյն թշնամու դէմ և կփշրեն դարաւոր ստրկութեան շղթաները:

Յեղափոխական ոյժերի այդ միացումը պէտք է իրականացնել: Յեղափոխական իդէալական այդ դունտը պէտք է շինել: Այն օրը, երբ մենք կարող կլինինք լրացնել և այդ գերագոյն պահանջը — Հայրենիքը փրկուած է:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՐԻՔԻՆ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՆՏԱԳՈՆԻՉՍԸ

Յայտնի է որ հայ յեղափոխական մարմիններից միայն չին Հնչակեանները եղան, որ չմասնակցեցան Երիտասարդ Թիւրքիայի կամ, ինչպէս ընդունուած է անուանել նրանց բաղաբական աշխարհում, Օսմանցի ազատամարտի վերջերս Պարիզում գումարած կօնգրէսին, հակառակ կրկնակի հրաւերներին, որոնք ստացան նրանք կօնգրէսը կազմակերպողներից և որոնք անպատասխան մնացին նրանց կողմից:

Այս իրողութիւնը հայ յեղափոխական պատմութեան մէջ եթէ հանդիսանար որպէս լոկ մի պատահականութիւն, առանց որևէ կապ կամ առնչութիւն ունենալու յեղափոխական գիտակից մտածման հետ, մենք, իհարկէ,

ամենևին էլ չէինք վերադառնալ նրան և կթողնէինք որ նա կորսուէր լուրձեան, անյայտութեան մէջ: Սակայն իրականութիւնը այդ չէ: Այն դիրքը, որը ունեցաւ Հին Հնչակեան Կուսակցութիւնը Օսմանցիների կոնգրէսի հանդէպ, չառաջացաւ որևէ անհոգ, անտարբեր, անգիտակից պատահականութիւնից, այլ նա եղաւ, ընդհանրապէս բոլորովին որոշ, գիտակից մտածման արդիւնք, նախապէս մտածուած և հարցի բազմակողմանի ուսումնասիրութեան վերայ կեցած որոշման մի հետևանք: Արդարև, այն միջոցին երբ Պարիզում տեղի էին ունենում կոնգրէսի նիստերը, լուծելու համար այն հարցը թէ չէր կարելի արդեօք մի դրօշի տակ համախմբել և մի մարմնի վերածել Օսմանեան բռնապետութեան տակ հեծող բոլոր ժողովուրդների յեղափոխական ներկայացուցիչ տարրերը, Հին Հնչակեան Կուսակցութիւնը ձիշդ այդ միջոցին, իւր պատգամաւորական ժողովի միջոցաւ, զբաղուած էր ի միջի այլոց և լուծելու այդ միևնոյն հարցը և դալիս էր այն եզրակացութեան որ ո՛րևէ համերաշխ գործունէութիւն չէ կարող կենալ հայ յեղափոխութեան և Երիտասարդ Թիւրքիայի միջև: Ահա թէ ինչո՞ւ Հին Հնչակեան Կուսակցութիւնը հարկ չտեսաւ մասնակցելու Երիտասարդ Թիւրքիայի կոնգրէսին: Փաստը, որ այդ կոնգրէսը կատարելապէս վիժեց իւր նպատակների ու ձգտումների մէջ, փաստը, որ այդ կոնգրէսին մասնակցող հայ յեղափոխականները, որպէս մի մարմին, en bloc, կարճ ժամանակից յետոյ հարկադրուեցան թողնել ու հեռանալ կոնգրէսից, եկաւ անհերքելի կերպով ապացուցանելու որ Հին Հնչակեան Կուսակցութեան բռնած դիրքը վերաբերմամբ Երիտասարդ Թիւրքերին կատարելապէս համատասխան էր հայ յեղափոխական ոգուն, նրա ձգտումներին և իրերի զբոլութեան պահանջման:

Ապիւր կոնգրէսի սրահի դռնից ներս մտած՝ հայ յեղափոխականները, ընազդաբար, զգում են որ գտնուում են մարդկանց առաջ, որոնք ոչ աւելի ոչ պակաս, քան համարել ենք, իրենց թշնամիներն են, որոնց ներկայութիւնից հարկաւոր է որքան կարելի է շուտ խուսափել, ազատուելու համար հաղար ու մի խորամանկութիւններով, արևելեան բարբերին յառուկ շողորթութեամբ շաղախուած կեղծ ու պատիւ յարգանքների տակ ծածկելու թաքուն միտումներով լարուած թակարդներից, որոնց մէջ ընկնելը ուղղակի աղետալի կարող էր լինել: Ահա բոլոր իրողութիւնը մեզ համար, որ ակնյայտի կերպով դուրս է ցատկում և աչք ծակելու չափ առաջ է ցցուած բոլոր այն ագեղ, այն զզուելի տեսարաններից, որոնք պարզուել են այդ կոնգրէսում, և այն տեղեկագրից, որը կազմել են կոնգրէսին մասնակցող մեր հայ յեղափոխականները:

Կոնգրէսը վիժեց, ուրեմն: Երիտասարդ Թիւրքիայի հետ համերաշխ գործելու գաղափարը ջուրն ընկաւ: Այդպիսի մի համերաշխութեան կարելիութեան մասին յայտնուած մտքերը, կարծիքները, կատարուած արգումենտացիաները, տածուած յոյսերը, բոլորն էլ յայտնուեցան ուսուցիչական և առաջացած պատրանքից, իլլիւզիայից: Չեւրի մէջ մնացած իրողութիւնը, շօշափելի փաստը այն է որ այդպիսի համերաշխութիւն այդ երկու մարմինների մէջ, ընդդէմ տաճկական արդի բեթիմին, բացարձակապէս անհնարին է: Եւ մենք ուրախ ենք որ Հին Հնչակեան Կուսակցութիւնը, à priori, իւր կողմից, կոնգրէսի մասնակցող հայ յեղափոխականները a posteriori իրենց կողմից, եկան և յանգեցան այդ միևնոյն եզրակացութեան:

Եւ ուրիշ տեսակ էլ չէր կարելի: Որպէսզի համերաշխութիւն կենայ երկու մարմինների մէջ, անհրաժեշտ է որ այդ երկու մարմինները ներկայացնեն իրենց հիմնական նպատակների մէջ միևնոյն ձգտումները: Առանց այդ հիմնական անհրաժեշտութեան, անկարելի է որ ներանք գնան միմեանց հետ համերաշխ, ներդաշնակ, մշակելի կուլին մէջ, առանց միմեանց խանգարելու, առանց միմեանց դաւաճանելու: Իսկ այդպիսի մի հիմնական կէտ, շահերի մի հիմնական նոյնութիւն, մենք ոչ մի հատ չենք, գտնում Օսմանեան լիբերալների և հայ յեղափոխականների ձգտումների միջև, որպէսզի կարելի լինէր մտածել մի ըուպէ մի համերաշխ գործունէութիւն, մի դաշնակցութիւն ստեղծելու մասին այդ երկու մարմինների մէջ: Զիշդ է, և առարկում են սովորաբար, որ օսմանցի ազատամիտները նոյնպէս դժգոհներ են, ինչպէս հայերը, ինչպէս բոլոր օսմանեան բռնապետութեան լուծը կրող հպատակ ազգերը, որ նրանք էլ նոյնպէս ուզում են տապալել արդի կամայական բեթիմը, որ նրանց բոլոր յեղափոխական ոյժերը ուրիշ կէտի ուղղուած չեն բայց եթէ ամեն չարիքների պատճառ և պատասխանատու Սուլթան Համիդի վերայ, սակայն դժգոհ լինելը բաւական չէ, որպէսզի այդ երկու մարմինների մէջ համերաշխութիւն գոյանայ: Այստեղ վճռական և հատու նշանակութիւն ունեցողը հասարակական ձգտումներն են, հասարակական նպատակներն են, որոնք պէտք է որ միակերպ լինին երկու մարմինների համար էլ: Ուրիշ խօսքով, ուղղութիւնն է որ կարելի կամ անկարելի կդարձնէ համերաշխ գործակցութիւնը երկու հասարակական մարմինների մէջ: Խնդրի վերայ այս տեսակետից նայելով, խոր, գիտական վերլուծման ենթարկելով Երիտասարդ Թիւրքիայի ու հայ յեղափոխականների ձգտումները, ներանք վերջնական նպատակները, անմիջապէս կարելի է տեսնել այն ահագին, մեծ, ոչնչով չէկեղծ վիճը որ բացուած է նրանց միջև, այն ահագին պատնէշը, որ բարձրանում է երկուսի միջև: Ոչ մի կամուրջ չկայ, որ կարելի լինի դնել այդ վիճի, այդ լայն բացուածքի վերայ. ոչ մի սանդուղք չէ կարելի բարձրացնել անցնելու համար այդ պատնէշը: Երկու մարմինները մնում են միմեանցից հեռու, շատ հեռու: Նրանք միմեանց չեն տեսնում. նրանք միմեանցից մնում են բոլորովին ծածկուած: Այն ինչ որ տեսնում է, այդ միայն երևոյթն է, և այդ է որ մեզ խաբում և մտնում իլլիւզիաների:

Ինչ են այդ երկու հասարակական մարմինների ձգտումները: Պարզ է թէ ո՛ր կամ ինչ բանի են ձգտում Երիտասարդ Թիւրքերը: Նրանց ձգտումը, նրանց երազը ուրիշ բան չէ, եթէ ոչ իրագործել Միտհատի ժամանակից մնացած որորմելի Սահմանադրութիւնը, առանց զիպչելու սակայն բացարձակ միապետի անպատասխանատու հանգամանքին, կարծելով թէ այդ հակասական դրուութեամբ կարող կլինեն թիւրքիայի վարչական սխտեմը ազատել անսանձ կամայականութիւնից, իրականացնել ընդհանուր բարենորոգումներ երկրի ամեն մասերում և զբաղուել գահացում տուած լինել բոլոր դժգոհներին, բոլոր ընդվզողներին: Մենք առ այժմ խնդրի և քննութեան առարկայ չենք ուզում դարձնել այն միջոցները, որոնցով նրանք ուզում են հասնել այդ նպատակին. այդ դեռ կարեւոր չէ: Եթէ մենք տեսնենք որ նպատակի և ձգտումների վերայ, որոնք իսկապէս և ամենից առաջ իրաւունք են տալիս ուրոյն բաղաբական մարմին կազմելու, ուրոյն կազմակերպութիւն ունենալու, համաձայնութիւնը, համերաշխութիւնը անկարելի է՝ այն ժամանակ շատ

բիւզ բան կմնայ ասելու, գուցէ բոլորովին էլ աւելորդ լինի ասել, նրանց գործածած միջոցների վերայ, որ դառնում է երկրորդական հարց:

Երիտասարդ Թիւրքերը ձգտում են առաջացնել, խաղաղ միջոցներով, էվոլյուցիայի ճանապարհով, ինչպէս սիրում են նրանք ասել, մի զուտ ներքին յեղափոխութիւն պետութեան բոլոր ֆունկցիաների, բոլոր կարգերի ու կանոնների մէջ: Բայց այդ անելիս, նրանք և ոչ մի բովանակում իսկ չեն անցնում զրկուիլ պետութեան և ոչ մի կտորից և ոչ մի մասնիկից, դիպչել կամ թոյլ տալ դիպչել նրա ամբողջութեանը, որի պահպանումը նրանց համար միևնոյն հաւատոյ հանգանակն է, ինչ որ է իրա, սուլթանի և բոլոր Հին Թիւրքերի համար: Այդ կէտում նրանք յայտնում են նոյն բան և աւելի թիւթու պատրիոտներ, որքան չեն գուցէ Սուլթանը ինքը, և Հին Թիւրքերը: Նրանց յեղափոխական ձգտումը, որին, հետևաբար, զուտ ներքին է: Նրանք ուզում են բերեփոխել Թիւրքիան, վերականգնանքնել, երիտասարդացնել նրան ինքն իր վերայ, առանց դիպչելու, ինչպէս ասացինք, պետութեան սահմաններին: Այնպէս որ երբ կարգը գայ պաշտպանելու այդ պետութիւնը որևէ արտաքին ոտնձգութեան կամ ներքին ընդվզման, ապստամբութեան դէմ, որ կարող է սպառնալ լուծելու այդ նուիրակն, դաւանանքի կարգանցած ամբողջութիւնը, ցտեղու պետական օրգանիզմը, մի խօսքով բաժանելու, անդամատելու նրան, այդ պարագային, ասում ենք, Երիտասարդ Թիւրքերը պատրաստ են անմիջապէս, մի անգամից, մոռանալ իրենց բոլոր տարբերութիւնները, որով նրանք որոշում են իրենց ազգակից Հին Թիւրքերից և սուլթանից, և միանալով նրանց հետ, որպէս մի մարմին, պաշտպանել իրենց վսթանը ներքին կամ արտաքին թշնամիների դէմ: Երիտասարդ Թիւրքերն ասում են. յեղափոխենք երկիրը, այո, բայց նախ և առաջ պահպանենք նրա ամբողջութիւնը:

Մինք ոչինչ չունենք ասելու և ինչ կարող ենք ասել: Չէ կարելի պահանջել որ նրանք միանալով պետութեան թշնամիներին՝ անդամատեն իրենց վսթանը:

Բայց հէնց այստեղից էլ սկսում է, այսինքն հէնց հիմքից, արմատից, սկսում է կազմուիլ այն ահագին պատուական ծրագրը, այն անանցանելի անդունդը, որ անկարելի է դարձնում որևէ համբերաշխ գործակցութիւն Երիտասարդ Թիւրքերի և հայ յեղափոխականն որևէ մարմին, որևէ կուսակցութեան մէջ: Տրուած լինելով այս վերջինների տրամագծապէս հակառակ ձգտումները, որոնք էականապէս ազգային են, էականապէս անջատական (séparatiste) են, անտաքօնիզմը շահերի, եղև է տնտեսական, եղև է բաղադրական թէ ընկերային, այնպէս հիմնական, այնպէս խոր է որ այդ երկու մարմինները, արտաքին խաբուսիկ երևոյթների տակ, յայտնում են, ոչ աւելի, ոչ պակաս—թշնամիներ, հէնց որ գտնուում են միմեանց ներկայութեան՝ գործնական հողի վերայ:

Մի շատ խոշոր և կոպիտ սխալ է որ տարածուած է, եթէ միայն չլինին այնպիսիներ, որոնք հայկական յեղափոխական ձգտումներին այլ ուղղութիւն տան բան այն, որը մենք տալիս ենք և որ կարծում ենք թէ ճիշդ և ճիշդ համապատասխան է հայկական սրտի իղձերին, հայ ժողովրդի հառաչանքին ու իգէալին, ասում ենք, մի շատ խոշոր սխալ է որ տարածուած է հայ յեղափոխականներից շատերի մօտ և որի համեմատ իբր հայ յեղափոխականները ուզում են տապալել տաճկական պետու-

թեան մէջ տիրող ներկայութիւնը և նրան փոխարինել նոր, եւրոպական բաղադրակիր թ ազգերի մէջ ընդունուած բարձր կուլտուրային բեթիմով: Ոչ, այդպիսի միասնա չունի հայ յեղափոխականը: Հայ յեղափոխականի միասնան ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ թօթափել այն ստրկական լուծը, որի տակ հեծում է, տընում է, ճնշում է, չարչարում է հայ ժողովուրդը դարերից հետէ. խորտակել այն ամուր շրջանները, որոնցով կապուած են նրա ոտները, և վերջապէս ազատել, բռնի ոյժով, Հայրենիքը Օսմանական բաղադրական իշխանութիւնից և կաղմել, ստեղծել մի նոր երիտասարդ Հայաստան, սեփական կառավարութեամբ, սեփական օրէնքներով, սեփական կարգերով ու կանոններով: Ահա թէ ինչպէս ենք հասկանում մենք հայ յեղափոխական շարժումը, նրա ձգտումն ու ոգին, նրա նպատակը:

Պարզ է ուրեմն, և այդ բնականօրէն հետևում է մեր բոլոր վերև ասածներից որ մեր, այսինքն հայ յեղափոխականներիս և Երիտասարդ Թիւրքերի մէջ ոչ մի համբերաշխ գործունէութիւն, ոչ մի տեսակ դաշնակցութիւն չէ կարող դոյութիւն ունենալ—այդպիսի բան անիմաստ է ուղղակի, անհասկանալի է—երբ մեր ձգտումները դնում են, հէնց հիմքից սկսած, միմեանցից բոլորովին հակառակ ուղղութեամբ: Մենք ենք և կմնանք իրերի այս վիճակի մէջ, բաղադրականապէս, միմեանց թըշնամիներ, որոնց մէջ բացուած է մի խիստ անողորմ կոիւ, որ գոյութեան կոիւն է:

Եւ նրանք, Երիտասարդ Թիւրքերը, շատ լաւ են հասկացել թէ ուր են տանում մեզ մեր ձգտումները, շատ լաւ են զգացել թէ ինչ անհաշտելի անտաքօնիզմ տիրում է մեր և իրենց միջև: Եւ օգտուելով միամիտ կօկէտալրիներից, որոնք արուել են և արւում են տակաւին հայ յեղափոխականների կողմից օսմանցի լիբերալներին, նրանց կօնգրէսը կազմակերպողները, նրանց ջոջերը, տաճկական խորամանկ դիպլոմատների այդ ապագայ խորամանկ կանդիդատները, կօնգրէսի հրաւիրեցին հայ յեղափոխականներին, որպէսզի, յանուն Օսմանեան ընդհանուր ժողովրդների միութեան, յանուն ընդհանուր բարենորոգումների, խեղդէին, ոչնչացէին, խապաւ անհետանէին բաղադրական աշխարհից հայկական դատը: Այն ինչ չկարողացաւ անել Համիդը իր հարիւր հազարաւոր զոհերով, նրանք ուղեցին, խաղաղ միջոցներով, լուկ մնջիկ, կարինէտային հաշիւներով, յաղորդեցին: Մէկ բարով ուղեցին երկու թուռն զարնել, բայց իգերե ելան Հայ յեղափոխականները, ոմանք աւելի շուտ, ոմանք աւելի ուշ, նշմարեցին լարուած ծուղակը և խոյս տուին վրտանդից:

Պաշտպարային այս հիմնական տարբերութիւնը թէ և ինքնին բաւական է ապացուցանելու համար որ շատերի կողմից համակրութիւն ստացած և ցանկացուած համբերաշխ գործունէութիւնը Երիտասարդ Թիւրքերի և հայ յեղափոխականների մէջ բացարձակ անկարելիութիւն է, այնուամենայնիւ մենք աւելորդ չենք համարում նաև մի բանի խօսք տալ և այլ ոչ նուազ կարեւոր և գործնական նշանակութիւն ունեցող կէտերի վերայ, որոնք առանձին առանձին վերցրած, բաւական են մի անգամից կարճ կրտրելու որևէ կամէութեան, որևէ ցանկութեան՝ համագործակցութեան մէջ մտնելու այդ մարմին հետ:

Մենք մինչև հիմա խօսելով Երիտասարդ Թիւրքերի մասին, ընդունեցինք նրանց որպէս կազմակերպուած մարմին: Իրականութիւնը սակայն այդ չէ: Իսկապէս Երիտասարդ Թիւրքական մարմին, կազմակերպուած կուսակցութիւն չկայ:

Գրանք բոլորը անհասներ են, որոնք ցանուցիր, փոքրիկ խմբերով ցրուած են այլ և այլ կողմերում, առանց ունենալու որոշ կարգ ու կանոններով հաստատուած ներքին սերտ միութիւն, մի կազմակերպութիւն: Նրանց մէջ եղած կապը բազմապէս, հասարակական լինելուց աւելի, արեւելքին յատուկ ընտանութիւնն է: Չկայ երիտասարդ Թրքական կուսակցութիւն, պարտիա, որ իւր ճիւղաւորութիւններով թափանցած լինի տաճիկ ժողովրդի խաւերի մէջ: Այդ երկու գոյութիւնները, երիտասարդ Թիւրքիա և Տաճիկ ժողովուրդ, միմեանց բոլորովին անծանօթ աշխարհներ են: Խմբուած գլխաւորապէս փաղիշահի մայրաքաղաքում և նրա գահի շուրջը, ընդունակ են աւելի դաւադրական գործողութիւններով, խորամանկ մեքենայութիւններով, զինաստիա տապալելու քան թէ երկար և համբերատար աշխատութեամբ ժողովուրդ պատրաստելու և նրա ձեռքով հիմնական ժողովրդային յեղափոխութիւն առաջ բերելու: Համերաշխութիւն հաստատել մի մարմնի հետ, որ մարմին չէ, դաշնակցիլ խմբերի հետ, որոնք մեծաւ մասամբ բաղկացած են Սուլթանի անտուրաժից փախած, զոռելի կամօրոյից դուրս պրծած ամեն տեսակ շանտաժիստներից, խաբէբաններից, բարոյականից — հասարակական մարմինների այդ ամենամահաճեալ էլէմէնտը — միանգամայն զուրկ տարրերից, մենք գտնում ենք ոչ միայն անկարելի, այլ և վտանգաւոր: Խսկապէս, մեր երեւակայութեան մէջ չէ կարող մի բոլոր նկարելի մի պատկեր, ներկայացնող հայ յեղափոխականներին և երիտասարդ Թիւրքերին, շարւած կողք կողքի, սեղմ շարքերով, համերաշխ, միաբան, միասիրտ գրոհ տալիս տաճիկական բանակների վերայ, ազատելու համար... մեր Հայրենիքը, մեր սիրելի Հայաստանը: Այդպիսի պատկեր ուտոպիական է, ծիծաղելի է մինչև իսկ: Ուստի և մենք միանգամ ընդ միշտ թաղում ենք խոր գետնի տակ ամեն միտք, ամեն ջանք, համերաշխութեան և վտանգաւոր կոմպրոմիսների մշտնելու մի մարմնի հետ, որ դեռ գոյութիւն չունի և գոյութիւն իսկ ունենայ՝ սկզբունքով անկարելի է որ այդպիսի համերաշխութիւն կարելի լինի ունենալ նրա հետ:

Գիտենք, գոյութեան կռիւը, որը մղումէ տասնեակ տարիներից ի վեր հայ ժողովուրդը, դժուար է, ծանր է, գիտենք որ մեզանից անհամեմատ աւելի զորաւոր թըշնամուն յաղթելու համար հարկաւոր է ամեն կարելի ու անկարելի միջոցներից օգտուել, աջակցութիւն փնտռել, դաշինք կռել, սակայն և հարկաւոր է որ այդ միջոցները, այդ աջակցութիւնները իրական լինին, որ նրանք դրական օգուտ տան և երաշխաւորուած լինին որ յուսախաբութեան, պատրանքի չեն ենթարկի ժողովուրդին և, որ աւելի է, չեն դաւաճանի նոյն իսկ այն ձգտումներին, այն իդէալներին, որոնք խորը թաքնուած են հայ ժողովրդի հոգու ծալքերում և որոնց իրականացման մէջ միայն կարող է նա գտնել իւր անգործութիւնը, իւր բոլոր ազգային հասարակական ցանկութիւնների կատարուելը: Մենք թողնենք ուրեմն որ գնան այդ երիտասարդ Թիւրքերը, իրենց բաղդին, եթէ կարող են, ստեղծելու իրենց երազած երիտասարդ Թիւրքիան: Մենք, հայ յեղափոխականներս, ոչինչ չունինք զրա դէմ: Բայց մենք էլ կգնանք, մեր սեփական ոյժերով, մեր սեփական միջոցներով և ապահով, երաշխաւորուած ու նպատակայարմար դաշնակցութիւններով, ստեղծելու մեր ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆԸ:

Հ. Խ.

ԱՆՄԱՐՏՐԻ ՈՒՐՈՒՆԱԿՆԵՐ

— 0 —

Ամեն երեկոյ գիշերաժամին,
Երբ որ խօլ խաւարն երկիրն է պատում,
Երբ համայն աշխարհ բնով բաղդրագին
Իբրև գերեզման խաղաղ է նիրհում՝
Աւարայր դաշտում մի սէգ ուրուական
Յուզուած, շիտթուած շրջում է անձայն:

Թիկնաւէտ, առոյգ և բարձրահասակ,
Սեւաթոյր, երկայն գանգ ուրներ կախուած,
Երեսը վառվռուն, տեսքը փառունակ.
Որպէս լուսաւոր կանթեղից վառուած
Ցայտում են գէմքից կայծեր շողշողուն
Եւ խաւարապատ դաշտը փայլեցնում:

Ձախ ձեռքին ունէր նա վահան մի յաղթ,
Աջին՝ պողպատէ նիզակ կարծրակուռ,
Լայնալիւր մէջքին գօտի ոսկեպատ,
Որից կախած էր երկսայրի մի սուր.
Եւ բարձրագիւտակ սաղաւարտ գլխին
Փայլում էր որպէս հրաշարփի լուսին:

Եւ այս նշաններ ցուցնում էին պարզ
Մի բաշ զօրական, մի վեհ զօրավար,
Որ իւր թշնամուն տուեց պատուհաս,
Եւ նախճիր գործեց այդ դաշտում խաւար,
Որտեղ ներկայում տխուր աւերակ
Յիշեցնում անցեալ փառքի յիշատակ:

Շրջում է շրջում մուայլ, դառնալից
Ահարկու հսկան սաստիկ բարկութեամբ,
Եւ կանգ առնելով երկար շրջելից
Գոչել է սկսում ահեղ որոտմամբ,
Որի գոչիւնից դաշտըն Աւարայր
Արձաքանգ տալով թնդում անդադար.

Ո՛հ, ազգ իմ, ազգ իմ, դու ազգ Թորգոմեան,
Ի՞նչ վիճակումն եմ ես բեղի տեսնում,
Գեղ փառքով թողի, փառքով մեծութեան,
Ճնշելով բոնենք, գոռող թշնամուն,
Սակայն ներկայում երկպառակութեան
Եղել ես աւեր, աղբիւր գժտութեան:

Որքան նենգամիտ որդիներ ծնար,
Գործակից եղող, անդուստ թշնամեաց.
Մի՞թէ բերեցիր դու նրանց աշխարհ,
Որ լինին մատնիչ, դահիճ հայրենեաց.
Այրոււմ եմ, այրոււմ գիշեր և ցերեկ,
Չեն տալիս հանգիստ ինձ յուզմունք երբէք:

Ահ, նրանց գործեր սիրտըս խոցեցին,
Ցցեցին կրճրուած թունալից նետեր,
Բանալով վերքեր անբժշկելի.
Եւ ես թշուառս ամենայն գիշեր
Շրջում եմ յաւէտ առանց օթեան,
Եւ պիտի շրջեմ մինչև ի վախճան:

Մինչև որ ես բեղ տեսնեմ փոփոխուած
Եւ վերադարձած երջանիկ օրեր,
Մինչև մատուցիւն հիմնովին ջնջուած,
Մինչև հայի աստղն արձակէ շողեր.
Ազգն ու պանծալի հայրենիք խրոխտ
Պահէք յաւիտեան հաստատ, անյողգող:

Մինչև դադարէ եղբայրն եղբօր դէմ
Սրեր կռելուց՝ բուռն ցասումով.

Մինչև խանդավառ գործի ձեռնարկեն
Թշնամու ընդդէմ՝ սրբազան սիրով
Եւ արիւնաներկ Սասունի գլխին
Շողշողայ Հայի հինաւուրց արփին:

Մինչ երեք հարիւր հազար զոհերի
Անմեղ արիւնի յորդ վտակներին
Ծաւալած երկիր մեր հէգ, վշտալի,
Բուրաստան դառնայ բաղըր, խնկալի,
Եւ թնդայ յանկարծ ձայնը մարդկութեան.
«Վերականգնել է ԱԶԱՏ—ՀԱՅԱՍՏԱՆ»:

Խօսում է հսկան, ծանր հառաչում,
Մինչև ծագում է արշալոյս պայծառ,
Եւ մարդարտաշար ցօղեր են կաթում.
Ուռած աչերից իբր աղբիւր կայտառ,
Եւ ապա տխուր, մռայլ, վշտալից

Հեռանում է նա Աւարայր դաշտից:

Միշտ այսպէս ահա գիշերը միթին,
Երբ որ խօլ խաւարն երկիրն է պատում,
Երբ համայն աշխարհ բնով բաղցրագին,
Իբրեւ գերեզման խաղաղ է նիրհում,
Աւարայր դաշտում մի սէգ ուրուական
Յուզուած, շփոթուած շօջում է անձայն:

ՍԻՄ. ՏԱՀԻՐԵԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԻՐԳԸ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՆՊԻՊ

Մեզ հասնում են հետզհետէ բաղմամբիւ նամակ-
ներ, ամեն կողմերից, այլ և այլ դասակարգերից, որոնք
այլ և այլ ձևերով յայտնում են այն անհուն ուրախու-
թիւնն ու խնդութիւնը, որով ընդունուել է Հնչակեան
Միութիւնը հայ ժողովրդի կողմից և որ ամենաղօրաւոր
և կենդանի ապացոյցն է այն իրողութեան՝ որ հայ յեղա-
փոխական ոյժերի Միութիւնը ընդդէմ տաճիկ բռնա-
պետութեան՝ համայն հայ ժողովրդի սրտի ամենաջերմ
բաղձանքն է և նրա մտածման միակ առարկան ներկայ ըն-
կիս:

Աւելի լուս չէինք կարող անել, արտայայտելու հա-
մար ժողովրդական զգացումների այդ յորդառատ հոսան-
քն ու շղթայաղերձութիւնը և այն ահագին, խոր և ուժեղ
տպաւորութիւնը, որ գործել է կայացած հոյակապ Միու-
թիւնը թէ միացած երկու Հնչակեան հատուածների, թէ
բոլոր անկեղծ յեղափոխականների և թէ բոլոր հայ ժո-
ղովրդի վերայ, բայց եթէ թողնել որ իրենք, նամակ-
ների հեղինակները, խօսին իրենց ինքնատիպ լեզուով ու
ոճով:

Մանկալիայից գրում է հայաստանցի պանդուխտը.

«Ստացանք անհուն ուրախութեամբ Հնչակին: Կար-
ծեցի որ ազատեցանք Մայր Հայաստանին: Անչափ ուրա-
խութեան մէջ եղայ. և կը յուսամ որ այս Միութիւնով
պիտի հասնինք մեր նպատակին:

... 3 կամ 4 տարի է իվեր սուլթանը հանդարտե-
ցուցինք և ինքն ալ ուզածին պէս խաղաց հայ խեղճեղ-
բայրներու և հիմա աշխատինք որ չորս տարուայ վրէժ-
նիս առնենք սուլթանէն...»

Նորաւարտ հայ բժիշկը հետեւեալ կերպով է յայտ-
նում իւր ուրախութիւնը.

«... Ե իտակը հրճուեցայ կարգալով այս վերջին
նոր համարը, ուր կողմունուի նոր Միութիւնը, ՄԻՈՒԹԵԱՆԸ

բոլոր հին և նոր ընկերներու մէջ: Թող մեր նախահարց
նշանաբանը նոյնպէս մեզի ալ լինի թէ «անմիութիւն ծը-
նող չարեաց» միութիւնն է ծնող բարեաց: Ուրախալի է
տեսնել որ 1896-էն իվեր ծագած գժտութիւնը այսօր
վերջ կգտնէ սիրոյ և եղբայրակցութեան սերտ կապին
տեղի տալով...»

Տարագիր արտոբեալից ստանում ենք հետեւեալ սըր-
տակտուր տողերը.

.... Երկար տարիներէ իվեր անկեալ, նահատակ Ազ-
գիս փրկութիւնն ու նրա վերաւոր սրտին միակ սպեղանին
եղող ՍՈՒՐԲ ՄԻՈՒԹԵԱՆԸ, որուն միլիոնաւոր բաբախող
սրտեր անհամբեր կսպասէին, օրհնեալ է Աստուած, ալ-
սօր կկատարելագործուի: Ազգն և Ազինք կը գովեն այս
հսկայ բայը, որ ոսկի տառերով պիտի արձանագրուի
պատմութեանց էջը:

«Ս և բախտ Ազգիս անթիւ, անհամար հարազատ
գառնուկներն, կտրիճներն, որք փրկութեան հարսնիքին
մէջ կտոր կտոր յօշոտուեցան, ոմանք աւերակներու մէջ
ոմանք սարերու, ձորերու մէջ, այսօր իրենց նահատակաց
վայրերէն գլուխին վերցուցած կը մրմնջեն խեղդուկ ձայ-
նով մը. կեցցէ՛ Միութիւն, կեցցէ՛ Ազատութիւն, կեցցէ՛
Հնչակեան Կուսակցութիւն...»

«Հապա տարագրեալներս, որոնց ոմանք... անա-
պատն, աւաղ է անհուն ովկէանն անցնելով, ... կիզիչ
օդին, աղի ջրին, մարդակերպ հրէշներուն մէջ ապրիլն,
հայրենեաց կաթոգին սիրուն համար, Եդեմական կեանք
կը համարին: Իսկ ոմանք 7-8 երկար տարիներէ իզերէ,
երբեմն ծանրակիր շղթաներու տակ, զնդաններու մութ
ու խոնավ օդին մէջ, յիշելով հայրենեաց բաղըր յիշա-
տակը, առանց դժգոհութեան, բոլոր չարչարանք ու տա-
ռապանքները փառք կանուանեն...»

Հին, շատ ծանօթ և բանտերի մէջ տառապած յեղա-
փոխականը անկարող է լինում գրչով պարզել իւր եղ-
գացած անհուն ուրախութիւնը.

«Հնչակեան Կուսակցութեան Միութեան լուրը ան-
կեղծ յեղափոխականներու և ազնիւ հայրենասէրներու
սրտերը անհուն ուրախութեամբ լիցուց և առ հասարակ
շատ քողոր տպաւորութիւն թողուց: Ինչպէս մենք՝ նը-
մանապէս կարծենք թէ շատեր չպիտի կարենան իրենց
զգացած ուրախութեան չափ ու սահման գրչով պարզել:
... որչափ բաղըր, որչափ ուրախալի է տեսնել միութիւն
մը, որ տարիներէ իվեր մըրկաւ անջատուած անհատներ
այսօր իրենց Ազգի և հայրենեաց ազատութեան սուրբ
գործը աւելի ամուր հիմերու վրայ դնելու և անգութ
թշնամոյն դէմ յաղթութիւն տանելու վստահութեամբ
ձեռք կը կարկառեն իրարու ըսելով. «Եղբայր եմք՝ մենք»:

«Ինչպէս դուք՝ նմանապէս և մենք այնպէս հաւա-
տացած և համոզուած ենք թէ բիւզ ատենէն ոչ թէ
երբեմնի «Հնչակեան» անուն կրող բոլոր անհատները,
այլ շատ մը անկեղծ և անձնուէր զինուորներ պիտի գան
և պիտի հաւաքուին այն սուրբ դրօշակի ներքեւ և իրենց
հայրենասիրական ձեռքերով պիտի բռնեն այն սիւնը,
որուն պատուանդան պիտի ըլլայ մեր անգութ թշնամոյն
պիղծ կուրծքը:

Հետեւեալ նամակը գնում ենք ամբողջութեամբ և
նոյնութեամբ համաձայն գրողի ցանկութեան:

Սիրելի Հայրենակիցներ,

Ուրախութեամբ ստացանք մեր սիրելի «Հնչակը».
բայց բոլորովին տարբեր, բոլորովին փոխուած: Տեսանք
այն սքանչելի ձեռքերը, որ թերթին ճակատը դրօշմուած,
ապագայի լիքն յոյսերով իրար սեղմած, աւելի փայլ մը,

դարդ մը տուած էին մեր նուիրական շնչակին:

Այսօր անհուն ուրախութեամբ լեցուած են մեր սրբ-
տերը այն արտերը՝ որ 96-ի դժբաղդ բաժանումից յետոյ՝
միշտ կը սխալին: Այսպէս անցուն տարիներ՝ յուսելով որ
վերջ մը տրուի մեր վերքերուն: Այսպէս տոկացիներ, մինչև
որ այն ցանկալի բողբոջն եկաւ. թէև անցեալը շատ ա-
ղետալի եղաւ:

Եւ ահա այսօր, անհուն ուրախութեամբ լեցուած,
պատրաստ եմք ամեն ինչ զոհել, տեսնելով որ մեր փա-
փաքներն, իրականանալու վրայ են: Այլ ևս բուժուած են
մեր Ազգի վերքերը, տեսնելով որ մեր պարագլուխներ,
որոնց յանձնուած է ազգի մը ճակատագիրը, մէկ կողմ
ձգած անցեալի անձնական կամ կուսակցական անհիմն
խնդիրները՝ այսօր իրար դառնալով իրար համոզելով փոխա-
դարձ զիջումներով, համբուրելով զիրար, միմեանց ձեռք
են կարկառում:

Արեւմտ, սիրելի ընկերներ, համբոյր ձեր ձեռքերուն,
որոնք սուրբ են և նուիրական: Համբոյր, բիւր համբոյր
այն ձեռքերուն, որոնք միլիոնաւոր ժողովուրդի ազատութեան
դուռը պիտի բանան: Եւ և համբոյր ձեր վեհ ճակատին,
որ թողած հայր, մայր, կին, եղբայր, քոյր, ամեն ինչ, և
բաշուած օտարութեան մեջ, կը պատրաստուիք կուռիչ
ահաւասար ուժի դէմ: Եւ այսօր թշնամին աւելի ահա ու
սարսափի մեջ է, տեսնելով մեր միացած ոյժը, որ պիտի
սպառնայ իրեն՝ գլուխ ծռել մեր արդար պահանջնե-
րին:

Անհուն ուրախութեան, սիրելի հայրենակիցներ,
ջերմ համբոյրներ ձեր շրթներուն, որոնք ՄԻՈՒԹԻՒՆ կա-
ւետէին մեզ: Համբոյր ձեր պատուական գրչին՝ որ կըսէր.
«Մենք միանում ենք, որովհետեւ այդ էն պահանջում
մեր հարիւր հազարաւոր զոհերը, որովհետեւ վրէժ են
կանչում մեր անթիւ ահամար նահատակները իրենց
գերեզմաններից և այլն...»: Աւտի ինչպէս միշտ, նա և
այսուհետեւ աւելի հաստատ համոզումով պատրաստ եմք
ամեն ինչ զոհել, ամեն ինչ որ կը պահանջէ ՍՈՒՐԲ ԳՈՐ-
ԾԸ: Ես այնպէս համոզուած եմ՝ որ եթէ դարձեալ ըլլայ
ջարդ, կտորած. միլիոնաւորներէ մնան հազարաւոր, մնան
հարիւրաւոր, դարձեալ միացած ուժով կը կուռիք և վեր-
ջապէս կը յաղթենք, որովհետեւ կմեռնինք ծնելու համար:
Թշնամին ծնած է՝ պիտի մեռնի: Իմ համոզումս այս է
և կրնամ ըսել ընդհանուրի ալ, եթէ միայն շարունա-
կեմք միութեամբ և անկեղծ գործունէութեամբ:

Արեւմտ կը մաղթեմ ձեզ ոյժ, կարողութիւն, որպէսզի
ձեր ուսերու վրայ առած լուծը՝ տանելու կարող ըլլաք:

Ընդունեցէք յարգանքներս

Ձերդ անձնուէր

ՍՈՒՐԲԻՆ

Կուսակցութեան գանձարանում շնորհակալութեամբ
ստացուել են հետեւեալ գումարները. —

ԱՄԵՐԻԿԱՅԻՑ՝ 30 անգլ. ոսկի, 5 շիլինգ և 7 պէնս.
ստացուած 1 ինի շնչ. Մասնաճիւղի միջոցաւ:

ՆԻՒԵՐՔԻ ԶՆՇ. Մասնաճիւղից՝ 5 անգլ. ոսկի:

ՊՈՍՏՈՆԻ ԶՆՇ. Մասնաճիւղից՝ 9 անգլ. ոսկի, նուի-
րել են՝ Յ. Փ., Արթ., Գ. Տ. Յ., Peter, Mano, 5-ական
դոլ. Կ. Մ., 3 դոլ. 60 ֆենթ, Կ. Կ., 3 դոլ. 6. Կ., Ռու-
բէն, Բերդ, Խ. Գ., Ա. Թ., և Յ. Կ., 2-ական դոլ., Մաս-
նաճիւղի սնտուկէն 40 սէնտ:

ՍՈՒԼԻՆԱՅԻ ԶՆՇ. Մասնաճիւղի միջոցաւ 500 Փրանկ,
հանգանակուած հետեւեալ կերպով.

Վասպուր խմբից՝ Միհրդատ, Վառապապուհ, Վարդան, 10
ական Փր., Տրդատ, Վահրէժ, Վաղարշ, Խնձորիկ, Արսէն
5-ական Փր., Մեսրոպ 4 Փր., Հրանտ 2 Փր.: Մասնա խմբից՝

Բոսփոր, Պաղտասար, Թաթուլ, Սուրէն, Արտաշէս, Կարթե.
5-ական Փր., Արամ 10 Փր., Արարատ 4 Փր., Օրէնս 24 Փր
70 պան, Զաւէն 10 Փր.: Կայծակ խմբից՝ Զապէլ, Վարդոյ,
Աբուբէլճ, Խ. Կէն, Հայկակ, Պարսոյ, Կայքար 5-ական Փր.,
Մամիկոն 10 Փր., Գուրգէն 3 Փր.: Հայկայ խմբից՝ Ռուբէն,
Աղատ, Վահէ, Բնոն 5-ական Փր., Վահրամ 4 Փր., Մի-
ջիւն 20 Փր., Բերդ 10 Փր., Աշոտ 1 Փր., Ընձակ 2 Փր., Մկ
20 Փր.: Վրիժառու խմբից՝ Զարգէլ, Աղասի, Լեոն, Պետոյ,
Փայտ 5-ական Փր., Գրիգոր 10 Փր., Նախոյ 10 Փր.: Ընթեր-
ցարանից 12 Փր. 30 պան: Բարեւեթ Ազգայիններից՝ Տ. Տ.,
Մ. Ե., Խ. Ա., Ա. Ա., Զ. Խ., Յ. Ս., Մ. Յ., Պ. Մ. Ե., Ա., Մ. Պ., Խ.
Ե., Ս. Ա., Յ. Ե., Ս. Ս., Մ. Յ., Մ. Ա., Ա. Ն. 5-ական Փր., Պ. Ա.,
Ս. Մ., Ա. Ե., Ս. Պ., Մ. Գ. 10-ական Փր., Ա. Ի. 2 Փր., Խ. Կ.
7 Փր., Ա. 7 Փր., Յ. 6 Փր., Մ. Մ. 3 Փր., Ի. Մ. 7 Փր., Մ. Ի.
2 Փր., Դ. Պ., 2 Փր., Մ. Պ., 15 Փր.:

«ԿԻՒԿԻԱ»-ի ԶՆՇ. Մասնաճիւղից՝ 2 Անգլ. ոսկի:

ԼԵՉՈՒԱԿԻ ԶՆՇ. Մասնաճիւղի կապան խմբից՝ 3 անգլ.
ոսկի և 3 շիլինգ.

ԵԱՅԱՅԻ ԶՆՇ. Մասնաճիւղից՝ 50 ռուբլի, հանգա-
նակուած հետեւեալ կերպով.

Մասնաճիւղի գանձարանից 24 ռ., Վարաժնունից 6 ռ.,
Արիգածից 5 ռ., Եփրեմից 5 ռ., Շանթից 3 ռ., Անեւե-
ոյթից 3 ռ., Մարտիրոսից 2 ռ., Կարմիր Մօրուքից 1 ռ.,
Սեդրակից 1 ռ.:

ԳԵՏԱՐԵԼԻՆԻ ԶՆՇ. Մասնաճիւղի միջոցաւ՝ 30 ֆուէ-
րից 5 ռ.:

ԾԻՒԼԻՍԻ ԶՆՇ. Մասնաճիւղից՝ 45 ռուբլի, հանգա-
նակուած հետեւեալ անձերից. Արեւելից 1 ռ., Մուշե-
ղից 2 ռ., Սամուէլ Բագրատունից 5 ռ., Կիւրեղից 5 ռ.,
Զաքար Սանոսանից 5 ռ., Կայծակեանից 1 ռ., Մտածողից
2 ռ., Ասիայից 2 ռ., Յովնան Ղուլումձեանից 2 ռ., 50 Կ.,
Համբարձում Պոստիկեանից 2 ռ., 50 Կ., Արեգակից 10 ռ.,
Ոսկի Մատանից 2 ռ., Հրանդից 1 ռ., Գարունից 50 Կ., Աթ-
ճիճից 2 ռ., Արտաշից 1 ռ., Չմեռից 50 Կ.:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆԻ Ապագա ԶՆՇ. խմբից՝ 15 ռուբլի
75 կոպէկ: Նուիրել են՝ Ուրուր, Բասոն, Սարնատ, Գա-
լաճ, Աղէղով, Զոհ, Սիրուն, Սիրիկայ, Երեւան, Աշտա-
րակ, Ահիկ, Անհոգի, Զանիւլատ, Կրակ, Պողպատ, Մար,
Ահրատ, Շառլաթան, Մրրիկ, Սեւար, Աստղ, Արթուն,
Միլատ, Արապո, Գոհին, Ամպ, Գասպար, Բաղէ, Ահունը,
Արտ, Աշոտ, Կայծակ, Խրկաթ, Պահարիւ, Վարվաճ,
45-ական կոպէկ, և 75 Կ. փոխադրութեան ծախք:

ԼՕՆՏՕՆԻՑ մի ոմն՝ 1 շիլինգ:

ՖԻԼԻՊԻ ԶՆՇ. Մասնաճիւղի գանձարանում շը-
նորհակալութեամբ ստացուել են հետեւեալ գումարնե-
րը վերջին տասն ամսուայ ընթացքում:

Անդամավճարներից հաւաքուած. Լուտերից 10 լեֆ, Հա-
մազասպից 10 լեֆ, Միհհ 10 լեֆ, Սուրէնից 10 լեֆ, Քը-
րանքից 10 լեֆ, Աղատեանից 10 լեֆ, Աւօից 10 լեֆ,
Շանթից 10 լեֆ, Վալիկ Յովհաննէսից 10 լեֆ, Նուիրա-
տու թիւններից՝ Լուտերից 15 լեֆ, Շանթից 8 լեֆ, Վը-
ռըշիկից 11 լեֆ, Մշէհից 5 լեֆ, Ա. Աղատեանից 5 լեֆ,
Ա. Արշակունիից 4 լեֆ, Սուրէնից 3 լեֆ, Քրանքից 2
լեֆ, Հ. Մ. ից 2 լեֆ, Համազասպից 2 լեֆ, Աւօից 2 լեֆ:
Այս գումարներից 46 լեֆը միայն կեդրոն ղեկուած է իր
ժամանակին. իսկ մնացեալը՝ յատկացուած է տեղական
ծախսերին:

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ
և դրամ ու մանդատ ուղարկել հետեւեալ հասցեով.

M Lambert.—85, Peckham Rye
London S. E. (Angleterre).

ՏՊԱՐԱՆ

«ՀԵՁԱԿ»-Ի

ԼՕՆՏՕՆ.